# Medi-Cal ստացող որոշ ընտանիքներ կարող են դիմել SUN Bucks-ի համար

## Medi-Cal-ի որոշակի տեսակներ ստացող ընտանիքները կարող են դիմել SUN Bucks-ի համար:

Medi-Cal ստացող որոշ երեխաներ ավտոմատ կերպով ստանում են SUN Bucks: Սակայն, եթե երեխայի Medi-Cal-ը տրամադրվում է այնպիսի ծրագրերի միջոցով ինչպիսիք են՝ Լրացուցիչ ապահովագրական եկամուտը, Որդեգրման աջակցությունը կամ Խնամատարությունն, ապա այդ դեպքում պետք է դիմել SUN Bucks նպաստների համար երեխայի դպրոցի միջոցով մինչև 2025 թվականի սեպտեմբերի 2-ը:

## Ինչպե՞ս կարող են SSI/SSP-ի, որդեգրման օգնության կամ խնամատարության միջոցով Medi-Cal ստացող երեխաները ստանալ SUN Bucks:

### Եթե երեխան.

- Ստանում է Medi-Cal, որը **չի** համապատասխանում դաշնային աղքատության մակարդակի 185%-ին կամ դրանից ցածր մակարդակին, և
- **Չի** ստանում CalFresh կամ CalWORKs, և
- Դպրոցի կողմից **չի** հավաստագրվել որպես ներգաղթյալ, խնամատար, անօթևան կամ փախստական:

**Այնուհետև ընտանիքը պետք է մինչև 2025 թվականի սեպտեմբերի 2-ը երեխայի դպրոց ներկայացնի Համընդհանուր նպաստի դիմումի ձև կամ դպրոցական սննդի դիմումի ձև:**

## Կարևոր հիշեցումներ.

- **SUN Bucks-ը չի ազդում ձեր ընտանիքի ներգաղթի կարգավիճակի վրա:** Այցելեք www.cdss.ca.gov/inforesources/cdss-programs/refugees/public-charge կայքն՝ ավելին իմանալու համար:
- **Համոզված եղեք, որ Ձեր կոնտակտային տվյալները թարմացված են:** Թարմացրեք Ձեր ֆիզիկական և/կամ փոստային հասցեն, հեռախոսահամարը և էլ. փոստի հասցեն Ձեր երեխայի դպրոցում, դպրոցի վարչակազմում կամ տեղական վարչաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակում: Դուք կարող եք նաև զանգահարել SUN Bucks-ի Աջակցության բաժին՝ (877) 328-9677 հեռախոսահամարով՝ հաղորդելու կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին:
- **SUN Bucks քարտի տրամադրման հետ կապված ցանկացած սխալի մասին հայտնեք SUN Bucks Աջակցության բաժին՝ (877) 328-9677 հեռախոսահամարով:** Ընտանիքը չի կարող ստանալ և օգտագործել մեկից ավելի SUN Bucks քարտ մեկ երեխայի համար կամ SUN Bucks ստանալ մեկից ավելի նահանգներից (7 CFR § 292.27):

### Ցանկանու՞մ եք ավելին իմանալ:

- Այցելեք՝ www.cdss.ca.gov/SUNBucks:
- Դիտարկեք CDSS YouTube SUN Bucks Playlist-ը:
- Սկանավորեք արագ արձագանքման (QR) կոդը:

**SUN Bucks ծրագիրը Կալիֆորնիայում հնարավոր է դարձել ԱՄՆ Գյուղատնտեսության վարչության (USDA), Սննդի և սնուցման ծառայության (FNS) ֆինանսավորմամբ և իրականացվում է Կալիֆորնիայի Սոցիալական ծառայությունների վարչության (CDSS) միջոցով՝ Կալիֆորնիայի Կրթության վարչության (CDE) հետ համատեղ: www.cdss.ca.gov/sunbucks | www.cde.ca.gov/ls/nu/sf | SUNBucks@dss.ca.gov:**
**USDA-ն հավասար հնարավորություններ տրամադրող գործատու և վարկատու է: 2025**
**Լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք՝ www.fns.usda.gov/summer:**
(Armenian)